ՅՈԼՅԱՆ
ՀՀ ԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

11.09.2024 N 02-419

«Մ. Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԼԵՎՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ

ՀՎՀՀ՝ 02890282

Հասցե՝ ք. Երևան, Դեղատան փ. 10$_2$, 6բն.

Հեռ՝ 091469708

Էլ. փոստ՝ tciatcan-nerker@mail.ru

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Կիրակոսյան, ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ի և «Մ. Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի միջև 15. 04. 2024թ. կնքվել է ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/29-08 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 1025375 (մեկ միլիոն քսանհինգ հազար երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ ընդհանուր գնով:

04 հուլիսի 2024թ. Պետական վերահսկողության ծառայությունից ստացվել է թիվ Ե/1619-24 գրությունը /կցվում է/, որով ներկայացվել է տեղեկատվություն, որ «Մ. Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն փոխկապակցված է Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող «Մաան» ՍՊԸ-ին:

ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ - 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու

ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

- 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին.

- 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի

լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Նշված կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի նշված կետերը, պայմանագրի 8,3 կետը, ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ն մասամբ լուծում է և «Մ. Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի հետ կնքված ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/29-08 ծածկագրով գնման պայմանագիրը:

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ն, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի, 10 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնելու է «Մ. Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին Գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը: Միաժամանակ հայտնում եմ, որ վերոնշյալ ժամկետում Ձեր կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները վճարելու և վճարման հանձնարարականները ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ ներկայացնելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա պարբերության համաձայն, «Մ. Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն չի ներառվի Գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Դիանա Մադոյան
Գնումների համակարգող
Հեռ՝ 093023401